


Հրաժարական ներկայացրեց, կայսրը գրեց, «ես սպասում էի սորան, սակայն ծանր է ինձ մտածել, որ այդ կատարուում է մանիֆեստի հրատարակման օրը», երէկ կայսրը կանչեց Իգնատեին Թուում է թէ նա կլինի յաջորդը:

Այսօր Աբաղան ևս ինքը չգնաց զեկուցանելու, այլ արձակուրդի համար խնդիր տուեց: Կայսրը այդ ևս ընդունեց շատ ուր նկատողութեամբ:

Աբաղան բոլորովին շփոթուել է: Ապրիլի 21-ի նիստից յետոյ նա արուեստական կերպով բարձրացրեց բորսայի կուրսը, և յետոյ ցոյց էր տալիս, թէ նիստի պատճառով ինչպէս էին արժէթղթերը բարձրանում: Այն ժամանակ նա արտասահման հեռագիրներ է ուղարկել թէ՛ «ազատամիտ կուռակցութիւնը յաղթութիւն տարաւ», այժմ, մանիֆեստի հրատարակումից յետոյ, նա մուրհակազեղ զանձարանի (Учетный Банк) միջոցով դարձեալ արուեստական կերպով բորսայում արժէթղթերի գները ձգեց:

Թարգմ. Արսակ վարդապետ.



ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

I.

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

(Նրա մահուան առթիւ)

Ա.

Ս. Էջմիածնում տեսայ ես նրան վերջին անգամը՝ ծերացած, դեղնած երեսով, մարուող աչքերով: Նա հազիւ էր կանգնում ոտի վերայ, հազիւ էր արտասանում բառերը:

Տառնեակ տարիներ առաջ աշտարակցիներին ուղղած
տառնաւորի*) մէջ նա ասում էր՝

Ձեր մէջ մեռնելս ինձ կրկին կեանք է.

Եւ ահա նա դնում է Աշտարակ՝ վերջին անգամ նրա
ջուրը խմելու, նրա հողը համբուրելու, նրա օդը ծծելու
և . . . մեռնելու:

Փիղիկական տկարութիւնը նրան ստիպում էր հան-
գիստ գտնել գերեզմանում—վերջին տարիների ճակա-
տագրական հարուածները, հոգեկան տանջանքները նրան
թափառական Հրէայ էին դարձրել: Կնոջ մահից և որդու
ձերբակալումից և արքայից յետոյ նա Արքայ Լիւրի նման
չէր կարողանում հանգստութիւն գտնել՝ նա իր կո-
րուստն էր փնտրում, բոլորի դուռն էր բաղկում, ար-
դարութիւն էր սրոնում: Նա կորցրել էր իր հաւասա-
րակչութիւնը, նա մեռնում էր . . .

Բայց չէ՞ որ դեռ Հօրացիոսը որոշել էր այն մօմենտը,
երբ հասնում է բանաստեղծի իսկական մահը և որը այն-
պիսի գեղեցիկ արտայայտութիւն էր գտել Դուրեանի
գրչի ասկ՝

Իսկ աննշան եթէ մնայ

Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ՝

Եւ յիշատակս ալ թառամի,

Ա՛հ այն ատեն ես կմեռնիմ:

Բայց Պերճ Պօօշեանցի յիշատակը չի թառամի, մեր
գրականութիւնը նրան չի կարող մոռանալ, նա չի մեռնի:

Թող որ լարերը պոկուած լինին՝

Հնչիւնները դեռ հեկեկում են.

Թող որ զոհարանը ջարդուած լինի,

Կրակը դեռ վառւում է:

Բ.

Եօթանասուն տարեկան բովանդակալից, բաղմաշ-

*) Տես «Սօս և Վարդիթեր», 1887 թ. հրատարակութիւնը:

խառ, ինքնատիպ կեանք է ունեցել Պերճ Պռօշեանցը։ Նրա ծննդավայրը, շրջապատ հասարակութիւնը, դաստիարակութիւնը և ուսումը, նրա դործունէութիւնը դպրոցական, հասարակական և գրական առարկէնքերի վերայ, նրա ընտանեկան կեանքը, բնաւորութիւնը, աշխարհայեցողութիւնը — սա մի պինդ շաղկապեալ ամբողջութիւն է կազմում ստուերախիտ և հաստաբուն կաղնու նման, որ իր ամուր արմատներով ձուլուել է մայր երկրի հետ։

Գեղեցիկ Աշտարակը, շրջակայ սրբավայրերը, XIX-րդ դարու առաջին կիսի հայ գիւղացիութիւնը — ահա նրա առաջին և ամենազօրեղ տպաւորութիւնները։ Նա ծնունդ գիւղացի և թէպէտ և երկար տարիներ ապրեց քաղաքներում — այնուամենայնիւ նա միշտ մնաց գիւղացի իր բոլոր համակրութիւններով, սովորութիւններով, պարզ կենցաղով, յամառ աշխատասիրութեամբ, պահպանողական աշխարհայեցողութեամբ։

Խղճուկ էր այն ժամանակուայ գիւղի դպրոցը, ուր մտնում է և փոքրիկ Պռօշեանցը՝ այնտեղ աւելի ծեծում էին, քան սովորեցնում։ «Կռուածաղիկի» մէջ*) պատկերօրէն նկարագրուած է այդպիսի մի ուսումնարան, որը տարիներ անցնելուց յետոյ կրկին երևան է գալիս մեր գրականութեան մէջ և «Տէր-Թոգիկեան վարժատուն, սիստէմ» — հասարակ անուն է դառնում այդ տիպի ուսումնարանների համար։ Բարեբաղդաբար Պռօշեանցին յաջողում է 1852 թուին մտնել Ներսիսեան դպրանոց և աշակերտել Շանշեանի և Կարինեանի մօտ։ Ժամանակի այդ յառաջագէտ անձնաւորութիւնները Պռօշեանցի հոգեւոր հայրերն են դառնում, որոնց ուղիով նա և որոշում է ընթանալ ապագայում։ Իդէալական դադափարներով տոգորուած պատանին կեանք է մտնում — մի աւելի դժուարին դպրոց, քանց այն, որ անցել էր արդէն, մանաւանդ դժուարին մի իդէալիստի համար։ Նիւթական անապահովութիւն և շրջապատի տգիտութիւն — ահա ինչպիսի ոյ-

*) Տես գլ. Խ. «Ուսումնարան»։

ժերի հետ պէտք է կուտէր անփորձ երիտասարդը: Ուր գնալ, ինչից սկսել, ի հարկէ գիւղ, ի հարկէ ուսուցչութիւնից, ուրիշ ինչ ասպարէզ կար: Եւ ահա սկսում է ուսուցչական շարքաշ կեանքը՝ Աշտարակում պաշտօն է ստանում 120 ընդունուի: Իր անդրանիկ գործունէութիւնը լինում է այն, որ հոգաբարձական մարմնի պէս բան է ստեղծում դպրոցի շուրջը, բայց դրանով էլ վերջանում է հայ կուլտուրաբէզերի բարենորոգչութիւնը՝ գիւղացիները անբաւական են, որ նա չի ծնծում աշակերտներին . . .

«Եթէ դու մեր երեսաններին չծեծես, մենք քեզ մօտ սրդի չենք թողալ, Յովհաննէս վարժապետն էն տեղ պատաստ է . . .»:

Կարճ և ազգու, բայց ինչպիսի՝ ողբերգական դրութիւն:

«Նայեցի, նայեցի Շամօյի երեսին և տաքի՝ լաւ:

Լաւ խօսքի հետ երկու կաթիլ արտասուք ցած գլորուցին աչքերիցս: Գոյութեան կռիւն էր ինձ տագնապի մէջ դնողը. կամ պէտք է պառաւ ծնողիս և քոյրերիս օգնելու քաղցը պարտականութիւնից ձեռք քաշէի և կամ դադարեցի:

Մնաց ըտե՛ւ, Շանշեանցի ներշնչած սուրբ դադարի սրներ . . . *):

Այսպէս՝ դաժան իրականութեան զարնուելով փշրուել են մեր դադարարական երիտասարդներից շատ շատերի գեղեցիկ սկզբնաւորութիւնները, վառ երազները:

Անցնում են տարիներ՝ շատ բան դէպի լաւն է փոխւում մեր կեանքի մէջ. բայց հասարակական ասպարէզը քնտրողին մինչև այժմ էլ վիճակուած է անհատասար կռիւ մղել Շանտեսական անապահովութիւն» կոչուած եօթգլխանի վիշապի հետ: Հէնց այդ կռիւն էր, որ մղել է իր նախորդների և յաջորդների նման և Պերճ Պօշեանցը, որին ուսուցչական ճակատագիրը մէկ Շուշի էր քշում, մէկ Թիֆլիս, մէկ Երևան, մէկ Ադուլիս: Իսկ երբ այս կամ այն պատճառով դուրս էր մնում ուսուցչական ասպարիզից՝ պարապում էր լուսանկարչութեամբ,

*) «Յուշիկներ» Պ. Պօշեանցի. Երևո 1911:

աշխատում էր խմբագրատներում, վերջապէս ամուսն էր վաճառում։

Ինչ արած—ապրել հօ պէտք է. Յակոբ Պապոնեանն էլ մի ժամանակ զէյթուն էր ծախում։

Յաւալին այստեղ այն էր, որ թէ ուսուցչութեամբ և թէ այլ կողմնակի աշխատանքներով Պաօշեանցը պարտաւում էր յաւամսյից, ապրուստի միջոց ձեռք բերելու համար։ Նրա կոչումը—գրականութիւնն էր. նա ուզում էր ամբողջովին նուիրուել գործունէութեան այդ ճիւղին։ Նա երջանիկ է զգում ինքն իրան, երբ գէթ ծառայական ոսճկով կարողանում է ապահովել իր կեանքը՝ «եկ ինչ դադ ունիմ.—ասում է նա իր «Յուշիկների» մէջ *)—18 մանեք ամսական ունիմ, ի՞նչն է արգելում ինձ առաւօտները ժամը չորսին վեր կենալ, գրիչը ձեռքն առնել եւ նուիրուել երազական ցնորհներս գլուխ տանելու գործին... վեց քերից մի տեսակ կարեցի եւ առաջին գիւերը «Սոս եւ Վարդիթերիս» ստաշին գլուխը կտեցի...»։

Այսպէս էր գրում այդ գեղեցիկ արձակ պօէման, երկու մանուկ սրտերի այդ անարուեստ սիրոյ վէպը։

Գ.

Պաօշեանցը շատերի նման արդէն աշակերտական նստարանի վերայ սկսում է փորձել իր գրիչը և արդէն 1859 թուին «Մեղու Հայաստանի» մէջ (№ 16) լոյս է տեսնում նրա «Ան անձկալին Շուշան դուտոր Վարդանայ» ոտանաւորը, որը նրա անգրանիկ տպուած աշխատութիւնն է. ես չեմ տեսել այդ ոտանաւորը, բայց «Յուշիկներից» երևում է, որ դա նմանողութիւն էր կարինեանցի ծառղուկ ոտանաւորի, որը նոյնպէս Ալիշանի նմանողութեամբ էր գրուած։ Ծանօթ լինելով նրա ուրիշ ոտանաւորների հետ, կարող եմ ասել, որ այդ «Շուշանն» էլ միւսների նման շատ թոյլ գրուածք պէտք է լինի։

Բայց այդ գրական փորձերը դեռ չէին որոշել տաղանդաւոր երիտառարդի ապագան. հարկաւոր էր աւելի

*) Տես երես 245։

ուժեղ ազդեցութիւն, գրական իսկական մկրտութիւն։
Հազիւ քսան տարեկան Պաօշեանցի ձեռք ընկնում է Խ.
Աբովեանի «Վերք Հայաստանին», որը նրա համար մի նոր
յայտնութիւն է դառնում։ Նա կարդում է ազահութեամբ,
ինքնամոռացութեամբ . . . բայց լաւ է, ինքը Պաօշեանցը
թող պատմի այդ դէպքի մասին՝

«Դժուար է ինձ պատմել այն տպաւորութիւնը և այն
յեղշեղուկ զգացմունքները, որ անդադար միմեանց հեռւում
էին. մի քաղէ արտասուք տրտմութիւնից, միւս ակնթարթին՝
նստած անզիցս անհեթեթ ոտտումներ։ Եւ ի՞նչ դիտեմ, ընչէ՞ր չէին
պատահում ինձ. լաւ էր, որ տանուտէրս գնացել էր և մօտոս
սչ որ չըկար, ապա թէ ոչ արժէր կապկպել և յիմարանոց
տանել»։

Սա մի ցնցում էր, էկստազ, որից յետոյ նա առանց
տատանուելու վճռում է՝ «ես Աբովեանցին աշակերտելու
եմ» և ահա 1860 թուականին «Կոունկ»ի մէջ լոյս է
տեսնում նրա անդրանիկ վէպը, նշանաւոր «Սօս և Վար-
դիթեր»ը։

Խ. Աբովեանը իր «Վերք Հայաստանին»ով երկար տարի-
ների համար նախորոշեց մեր ստեղծուելիք վիպագրութեան
ուղղութիւնը՝ ժողովրդագրական—հայրենասիրական, երկու
դէպքումն էլ իրականութիւնը գեղեցկացրած ուսմանտիկ
շղարշով։ Այդ երկու տարրերը մէկ միանում էին, մէկ բա-
ժանւում։ Հեղինակների մի շարք գերակշռութիւն է տալիս
ժողովրդագրութեանը և կազմում է մեր ուշալիստ ժո-
ղովրդագրողների շկոլան՝ Պ. Պաօշեանցը, Ճուղուրեանը,
Ագապեանը, Մալխասեանը, մասամբ Շիրվանդադէն և
Աղայեանը։ Ուրիշ վիպասաններ՝ գտնւում են Խ. Աբովեանի
հայրենասիրական դիւցազներգութեան ազդեցութեան
տակ և այդ կողմն են զարգացնում մեր գրականութեան
մէջ. դրանք են Րաֆֆի, Փափաղեան, Ատրպետ, Ահարո-
նեան և ուրիշները։ Սրանց ամենսիրական գրութեան ան-
գամ զերծ չէ Աբովեանի ուսմանտիգմի հմայքներից։

Պաօշեանցի բռնած ուղղութիւնը գրականութեան
մէջ որոշւում է նրա վիպագրութեան մասին ունեցած
հասկացողութիւնից և մասնաւորապէս «Վերք Հայաստանին»ի

նշանակութեան մասին յայտնած կարծիքից:

Աբովեանը առաջինն եղաւ—ասում է նա «Սօս և Վարդիթերի» յառաջաբանում—որ մեր դիւցազնի ձեռքով ընծայեց մեր ազգին իր առանին կենաց նկարագիրը և յայտնապէս ցոյց տուեց, թէ մեր ազգն այնքան տառապանաց և նեղութեանց մէջ ևս ունի մի վեհ հոգի, Պարսից ըռնակալութեան դէմ դնող սիրտ, ջերմաջերմ Աստուածաշնորհութիւն, զուարճութեան մէջ հագեւոր պարզութիւն»:

Վէպի սիրային մասը բոլորովին անտես առնելով հանգերձ՝ Պռօշեանցը ճիշտ է բնորոշում «Վերք Հայաստանի» նշանակութիւնը: Բայց անբացատրելի կերպով նրան ամենից աւելի գրաւողը վէպի տուած «առանին կեանքի նկարագիրն» է—ազգագրական մասն է: Գուցէ այն պատճառով, որ նա այդտեղ գտաւ իր հայրենի Արարտեան երկրի նիստ ու կացի նկարագիրը, նա յիշեց հայրենի օջախը, որից անջատուած էր. գուցէ նրա մէջ խօսեց գիւղացուն յատուկ տեղական հայրենասիրութիւնը: Այսպէս թէ այնպէս նա նպատակ է իրան դնում Աբովեանի այդ գործի շարունակողը լինելու՝

«Վարդալով մեր նախնեաց պատմութիւնները—ասում է նա նոյն յառաջաբանում—և դանելով նրանց մէջ ժողովրդեան կենաց մի քանի նկարագիրը, աչքերնիս առաջին ունենալով մեծաքանքար Աբովեանի «Վէրք Հայաստանին», սիրահարուեցանք մեր հարց մեղ թողած աւանդութիւնների վերայ և կամենալով ծառայել ազգիս, իբրև յանձնէ ելեալ, երգեցինք ըստ մեր տկար կարողութեան մեր հայրենեաց սովորութիւնքն, վարքն ու բարքն և այլ այս տեսակ արտաքին ծէսերը . . . պատմեցինք Աշտարակ դիւղի սովորութիւնքը, ի մէջ բերելով ամենափոքր և չնչին համարուած արարողութիւններն անգամ առանց դանազանելու լաւն ու վատը . . . »:

Դ.

«Սօս և Վարդիթեր»-ով Պ. Պռօշեանցը կարծես երկրորդ անգամ հիմք է դնում այրարատեան աշխարհաբառի և ժողովրդագրութեան, Յետոյ դալիս են նրա «Կռուածաղիկը» և «Շահէներ», «Հացի խնդիրը» և «Յեցերը», «Բղդէն»:

«Սկիզբն երկանց», «նա» և ուրիշ գրուածքները, որոնց մէջ հեղինակը արգէն իսկական վիպասան է դառնում, երկրորդական տեղ տալով ազգագրութեանը, ճարիների ընթացքում նրա տաղանդը զարգանում է, ինքը աւելի շրջահայեաց է դառնում, որ և արտայայտում է այդ գրութեան մէջ՝ նախկին տաղակալի ազգագրական հում նիւթերը տեղի են տալիս աւելի պատկերաւոր նկարագրութիւններին, նախկին բարոյագիտական նէյնիմները դառնում են մերկացումներ, հասարակական բարքերի նկարագրութիւններ։ Վիպական սիւժէտի կողմից նա մի առանձին յառաջադիմութիւն ցոյց չի տալիս և աշխարհայեցողութեամբ ընդ միշտ մնում է ուսմանտիկ, այդ ճիշտ է։ Բայց նրա հերոսները քանի գնում հանում են իրանցից սանտիմենտալ վերարկուն ու իրական կեանքի շուխայովն են ասպարէզ դալիս։ «Կռուածաղիկի», «Հացի խնդրի», «Յեցերի» «Բղդէի» մէջ նա արգէն իրական կեանքի, դիւղացու չարն ու բարիի նկարագրող է, նման էրկման—Շատրիանի, Առէքաթի, Գրիգորովիչի, Զլատովրատովու, Փոն—Պօլէնցի և այլ օտարազգի ժողովրդագրողներին։

Ամենից աւելի նրան յաջողում են մասսայական նկարագրութիւններ՝ խաղերի, պարերի, դաշտային աշխատանքների, ժողովների, ուխտագնացութեան և այլն։ Նրա վէպերի գործող անձինք ոչ միայն անհատներ են, այլ և զանազան համախմբումներ՝ ընտանիք, դպրոց, վանք, ջահիլների խմբեր, դիւղացիութիւն, հոգևորականութիւն։ Այն նկարագրութիւնները, որոնց մէջ մասսան է դուրս բերուած կամ մի որ և է տարբերային երևոյթ նրանք մեր գրականութեան գեղեցիկ էջերից մէկն են անշուշտ Յիշենք «Սօս և Վարդիթեր»ի «Ջան դիւլումն» և «Վիճակ»ը, «Հացի խնդրի»—«Բարիկենդանը» ու «Թաւջին», յիշենք «Կռուածաղիկի» դրամատիկական «Քօչը», որը մի կողմից «Վէրը Հայաստանի» էջերն է յիշեցնում, միւս կողմից՝ կարծես, նախայափշտակում է Ա. Ահարոնեանի Զուլումի տարուայ պատկերները։

Մի ուրիշ կէտով էլ Պռօշեանցը օղակ է հանդիսաւ նստմ Սքովեանի և Բաֆֆու շկոյայի միջև՝ դա «կռուածադիկի» հերոսներէց մէկը—Վարդի—Տաճկաստան անցնելն և այնտեղ դործելն է։ Սրանով մի կողմից Պռօշեանցը ուզում է Աղասու շաւղովը դնացած տեանել իր հերոսներէց մէկին, միւս կողմից—որոշ տուրք վճարած լինել այդ միջոցին ծնունդ առնող նոր հոսանքին, որի նշանաբանն էր՝ «Ժողովրդի համար—Ժողովրդի մէջ»։ Դժուար չէ որոշ ծննդաբանութիւն (գէնէալօգիայ) հաստատել՝ Աղասու, Վարդի, Բաֆֆու հերոսներու, Փափաղեանի Խէյրաններու, Ատրպետի Իգիթներու և վերջապէս այն յեղափոխականներու միջև, որոնք ընկան «Աղատութեան ճամփին» — «Արցունքի Հովտում» . . .

Բայց սա էպիզօդ էր Պռօշեանցի մեղ տուած կեանքի մէջ. նրա գլխաւոր դործը եղել է այն, որ նա մեղ ծանօթացրել է դանադան տարեշրջանների հայ գիւղացու ընտանեկան — հասարակական կենցաղավարութեան հետ։ Աշտարակը պարտից տիրապետութեան վերջին տարիներին ժամանակ, Աշտարակը մովրոմբների ժամանակ, վերջապէս արդի Աշտարակը—ահա ինչ ենք տեսնում մենք նրա վէպերի մէջ, ինչպէս մի կալէյդօսկօպի մէջ՝ մէկ ուրախ և դուարթ, մէկ աղքատիկ և կեղեքող, ընտանիքի շուրջը հրապարակի վերայ կամ գաշտումը . . . Հարուստ տեղական բարքու, գոյնգոյն ներկեր, գիւղի, բնութեան բուրմունք և մի քիչ կօպիտ հումօր*) ահա նրա գրուածքի յատկանիշները։ Բազմաթիւ աւելորդաբանութիւններով, տեղ տեղ ճապաղ—նա միշտ անվրդով շարունակում է իր պատմութիւնը և միմիայն վէպի վերջին հրաժարում է իր օբիեկտիվութիւնից, որպէս զի յայտնէ իր համակրանքն կամ հակակրանքն այս կամ այն հերոսին։ Նա մինչև վերջը կարծում էր, որ վէպը դաստիարակչական նշանակութիւն պիտի ունենայ, բարոյագիւ-

*) Ի միջի այլոց յիշեցէք «Կատուն Բրիտտոսի աղլուխն է», «Կռուածադիկ»-ը ԽԱ. Գլուխը։

տութեան դաս պիտի տայ:

Եւ ահա մեր առաջ կանգնում է մի շարք վէպերի մէջ, գիւղի իսկական պատկերը, նոյնչափ տխուր և անմխիթար, որչափ այլանդակ է իրական կեանքը:

Գիւղը, ըստ Պռօշեանցի, մի դրախտ է, որը վատ մարդկանց ձեռքին դժոխք է դառնում . . .

Մինչև հոգու խորքը ցաւելով գիւղի այդպիսի վիճակի վերայ՝ Պռօշեանցը ամէն անգամ փնտրում—գտնում է այն ցնցերին, որոնք աննկատելի, բայց անխուսափելիօրէն, քանդում են գիւղացու բարօրութիւնը: Եւ որքան էլ թոյլ հոգեբան լինի Պռօշեանցը, այնուամենայնիւ նա տալիս է այդ բացասական, ժութ ուժերի մի գեղեցիկ ժողովածու:

Սկզբում նրա վիպական անվարժ գրիչը այս կամ այն անձնաւորութիւնը ընթերցողի աչքում հակակրելի դարցնելու համար պէս պէս պախարակելի ածականներ է կպցնում նրա տնուանը, օրինակ Սօս և Վարդիթերում «անխղճմտանք Տիրանը», «սատանի սրոց Տիրանը» և այլն: Յետոյ սակաւ առ սակաւ այդ անձնաւորութիւնը կենդանանում է, տիպիկական յատկութիւններ է ընդունում և դառնում է «չարահոգի Տէր Մէլիքսէթ» — յայտնի դեր խաղացող իր քսութիւններով և ոտնձգութիւններով («Կռուածաղիկ»), Կենդանի կերպով նկարուած է «Միքիտան Սաքոն» (Հացի խնդիր), որի համար գոյութիւն չունի ոչ մի որբութիւն. որը իր նպատակին հասնելու համար կանգ չի առնի ոչ մի ոճրագործութեան առաջ, բնական խելքի տէր, համարձակ, ճարպիկ—նա երբէք չի կորչի: Վէպի մէջ էլ նա ոչ պատժւում է և ոչ մեռնում, այլ փախչում է Պարսկաստան, որպէս զի տարիներ անցնելուց յետոյ կրկին երեւոյ իր հայրենի գիւղում արդէն ուրիշ դիմակի տակ: Ահա և Բալասան աղան, այդ գիշատիչ թռչունը, որը մինչև այժմ էլ խեղդում է ամբողջ գիւղը իր դաժան ճիրանների մէջ, ահա և գիւղի կարիւրիսաներ Խուղօ, Բղղէ, որոնք ուրուրներից ետ չեն մնում, բայց միայն սողալով-սողալով են հասնում այն բարձրութեան, որի վերայ կանգնած են գիւղի խոշոր գիշատիչները: Վեր-

Ջապէս ինչպէս մոռնանք մի քիչ չափազանցրած, բայց իրական տիպար Գնթունուն: «Հայրիկին պատուիրանաւ Պարնոյ կողմերն երբ ուսուցչութիւն կընէինք, ամիս մը յառաջ վերակոչեց զիս և բարեհաճեց այս կողմերն առաքել իւր սուրբ գրաւոր հրամանաւ» — այդ խօսքերով նա իր կատարեալ պատկերն է տալիս՝ կեղծաւորութիւն, շահագործութիւն ուրիշի անուան: Ո՛հ ինչպէս լաւ եմ ես ինքս ինձ պատկերացնում՝ այդ սողուն կենդանուն, որը ամէն տեսակ անպիտանութիւններ անելուց յետոյ գիտէ սուտ մեռուկ ձկանալ և ձեռները շփշփելով անմեղօրէն պատասխանելու «չեմ գիտէր» . . . նրանցով լիքն է մեր կեանքը, Գիւղերում՝ նրանք տիրացուներ են կամ՝ գրագիրներ, վանքում — փոքրաւորներ կամ՝ վեհարանականներ, իշխանութեան ձեռին — լաւ գործիքներ, տեղն եկած տեղը Մօլլալիներ, տեղն եկած տեղը — Վուռմեր . . . Եւ ժողովրդի ցասումը ու անէծքը նրանց հասցէին անպակաս է՝ — «Զեր ձամբէն փուշու տատասի դառնա՛ր, էս աշխարքը շմտնէիք. էլ գեղ, տուն, օջաղ, ընդանիք թողէ՛լ էք, որ չփչացնէք, ամէն տեղ հիմն արեդակ շուռ տուիք. Իգգիւրը ձեր ձեռովն ընչանք էս օր էլ արնի մէջ լեղ ա տալիս, Աշտարակ՝ հէրը որդուց հանեցիք, բաժան բաժնութիւն քցեցիք, երեսեքանցն իրար հետ թշնամացրիք, Ղամարու աղքատների բերանից սուտ սուտ սանտաներ շինեցիք՝ հարստներին ծախեցիք, Կարգարի գիւղումը միամիտ հարստներին ձանգեցիք, աղջիկ փախցրիք, գեղն երկու թիրայ (կուսակցութիւն) արիք՝ էս օր էլ իրար միս են ուտում. Ագուլիս ասում են քիչ մնաց ձեր ձեռքովը հաստատ ուսումնաւորանը շուռ դայ. ի՞նչ մինը միտոս բերեմ, քանի՞նը շարեմ, հաւողի մատն ուտող տաղձի պէս բռնել էք էս աշխարքը, փաթաթուել խեղճ ժողովրդի բողազին, հուփ էք տուել, աչքերը գադաթն էք թռցրել *). . .»

Մովրոյններ, նաչալնիկներ, տանուտէրներ, քահանաներ, դատաւորներ, միկիտաններ, գիւղի փաստաբաններ, գրագիրներ, մինչև իսկ տիրացուներ և եասաւուլներ — ահա ժողովրդի արիւն ծծող տղրուկները և հասարակական ցեցերը, ահա — վիպասանի խօսքերով ասած — «հաւողի

*) Տես «Ցեցեր» վէպը:

մատն ուտող տաղձերը: Նրանք այնպիսի մի դժեհ են ներկայացնում, որի առաջ անգոր են Հեթումները, Խեչանենց Խեչանները, Յակուխները, Սիսակները, Ներսէսները, Վարդերը և ստրկութեան մէջ խարխափող, բայց մաքուր և անկեղծ սրտի տէր, կանաչը:

Պաշտանքը ոչ կարողացաւ խորը թափանցել իր հերոսների հոգու մէջ, լուսաբանել և հիմնաւորել նրանց դործունէութիւնը, ոչ էլ գիւղի անմխիթար կացութեան իրաւական—տնտեսական պատճառները ուսումնասիրել: Միայն մի բան նրա համար պարզ էր և այդ կէտում նա լիովին արդարացի էր, որ այդ տեղ տգիտութիւնն է ժողատուութիւնը, խաւարն է սիրելի իր սէքսը: Դրա դէմ է հարկաւոր կռուել՝ հարկաւոր է վերացնել այդ մահաշունչ շղարշը: Կուտուրական դործունէութիւն՝ ահա այն կոչը, որ անում է հեղինակը իր վէպերի մէջ. մտէք Սիսակի նման ժողովրդի մէջ, ցաւակից եղէք նրա ցաւերին, կրթեցէք նրան, լոյս սփռեցէք ձեր շուրջը:

Այդ կոչը միեւնոյն ժամանակ լաւագոյն հայերի ըղձերի և գործերի ամփոփումն է, որի ծաւալից և ուժից է կախում մեր ժողովրդի յառաջադիմութիւնը:

Իսկ այդ սուրբ գործի համար ոչ մի զոհողութեան առաջ չպէտք է կանգ առնել: Օրինակ առնենք Դանկոյից*), որը տեսնելով ժողովրդի տառապանքները և կամենալով հանել նրան անտառի խորքերից, համոզում է հետեւել իրան ու գլուխ անցած առաջ է գնում, անտառը մեծ է, ճանապարհ չկայ. շատերը վհատում են, միւսները զանգատում, Դանկոն անդադար առաջ է գնում և տառապեալների ճանապարհը լուսաւորելու համար պատառում է իր կուրծքը և բոցավառ սիրտը իր ափի մէջ գլխից վեր բարձրացնելով առաջ է գնում և ազլած մարդկանց անտառից լոյս աշխարհ հանում...

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

*) «Եղէրգիւ Մ. Գորկիի պատմութեան հերոսը: